



«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ  
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

№ 005 06 սեպտեմբերի 2021թ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջ ՍՊԸ-ի

Ընդհանուր ժողովի 2021թ. սեպտեմբերի 6-ին տեղի ունեցած թիվ 5 նիստի

Ք.Երևան

Առաջնորդվելով «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջ ՍՊԸ-ի կանոնադրության 7.3 կետի «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի հիմնադիր Մ.Նանյանի հրավերով տեղի ունեցավ Քոլեջի Ընդհանուր ժողովի հերթական նիստը:

Քոլեջի Ընդհանուր ժողովի աշխատակարգի 5 կետի առաջին ենթակետի համաձայն՝ Ընդհանուր ժողովի նախագահ Մ.Նանյանը բացելով նիստը, նախ ողջունեց բոլոր մասնակիցներին, շնորհավորեց նոր ուսումնական տարվա կապակցությամբ և ներկայացրեց նիստի օրակարգը.

1. «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացի նախապատրաստական աշխատանքների մասին:

(Ձեկուցող՝ ՈԱ պատասխանատու Լ.Հարությունյան):

2. «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի 2021-2022 ուստարվա հաստիքացուցակի հաստատման մասին:

(Ձեկուցող՝ ՄՈԿ և Ընդհանուր բաժնի վարիչ Ա.Գյոզալյան):

3. «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի 2019-2024թթ. ՌԶԾ-ի ընթացքի մասին:

(Ձեկուցող՝ Տնօրեն Ի. Վարդանյան):

1. **Լսեցին՝** Որակի ապահովման պատասխանատու Լ.Հարությունյանի ելույթը «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի ինստիտուցիոնալ հավատարմագրման

գործընթացի նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ:

Լ.Հարությունյանը ներկայացրեց տնօրեն Ի.Վարդանյանի 15.02.2021թ. № ԿԳ 04-Ա հրամանով ձևավորված ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնավերլուծության աշխատանքային խմբի կողմից իրականացված աշխատանքները: Լ.Հարությունյանն իր ելույթում հանգամանորեն ներկայացրեց աշխատանքային խմբի կողմից իրականացված աշխատանքները համաձայն ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնավերլուծության աշխատանքային խմբի աշխատանքային պլան-ժամանակացույցի:

Պլան-ժամանակացույցի համաձայն ամբողջովին իրականացվել են նախապատրաստական բոլոր աշխատանքները, մասնավորապես՝

- ❖ ուսումնասիրվել են Քոլեջում գործող ներքին նորմատիվ իրավական փաստաթղթերը:
- ❖ Կատարվել է աշխատանքների բաշխում, ըստ չափանիշների:
- ❖ Մշակվել են տարբեր հարցումների անցկացման էլեկտրոնային հարցաթերթիկները, որը պլանավորվում է կազմակերպել ընթացիկ ուսումնական տարվա առաջին կիսամյակում:
- ❖ Ամբիոնների կողմից տրամադրվել են անհրաժեշտ տեղեկատվությունը:
- ❖ Ուսանողական խորհուրդի կողմից կազմակերպվում են տարբեր միջոցառումներ:

Ամփոփելով ելույթը Լ.Հարությունյանը հավաստիացրեց, որ Քոլեջը ամբողջովին պատրաստ կլինի լրացնելու ՈԱԱԿ-ի կողմից պահանջվող էլեկտրոնային հարցաշարը, 2021-2022 ուստարվա երկրորդ կիսամյակի ընթացքում:

### **ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.**

Ընդհանուր ժողովի նախագահ Մ.Նանյանը նշեց, որ ինքը անձամբ խնդրել է ՈԱ արտաքին փորձագետ Ա.Գ.Գյոզալյանին օգնել և տրամադրել մասնագիտական խորհրդատվություն այս գործընթացը ճիշտ և արդյունավետ իրականացնելու համար:

### **ՈՐՈՇԵՑԻՆ՝**

1. Լ.Հարությունյանի հախորդումն ընդունել ի գիտություն:
2. Հանձնարարել տնօրեն Ի.Վարդանյանին իրականացնել վերահսկողություն, ապահովելով աջակցություն աշխատանքային խմբին:
2. **Լսեցին՝** Քոլեջի ՄՌԿ և ընդհանուր բաժնի վարիչ Ա.Գյոզալյանի ելույթը «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի 2021-2022 ուստարվա հաստիքացուցակի հաստատման վերաբերյալ:

Բաժնի վարիչ Ա.Գյոզալյանն իր ելույթում ներկայացրեց 2021-2022 ուստարվա դասախոսական տարիֆիկցիայի հաստիքացուցակի նախագիծը, որը քննարկվել և երաշխավորվել է Տնօրինական խորհրդի կողմից:

Նա նշեց, որ հաստիքացուցակը համապատասխանում է Քոլեջի կառավարման կառուցվածքին և գործող պաշտոնների անձնագրերին:

Ա.Գյոզալյանը ներկայացրեց նաև ուսումնական մասի վարիչ Լ.Հարությունյանի զեկուցագիրը դասախոսական կազմի ծանրաբեռնվածության մասին, համաձայն նոր ուսումնական տարվա ուսումնական պլանի:

Ամփոփելով ելույթը, Ա.Գյոզալյանն առաջարկեց քննարկել և հաստատել (հաստիքացուցակի նախագիծը կցվում է):

### **ՈՐՈՇԵՑԻՆ՝**

1. Ղեկավարվելով «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի Ընդհանուր ժողովի աշխատակարգի 7-րդ կետի 2-րդ ենթակետով՝ Հաստատել 2021-2022 ուստարվա հաստիքացուցակի նախագիծը:
2. Հանձնարարել Տնօրեն Ի.Վարդանյանին այս գործընթացի վերահսկողությունը իրականացնել անձամբ:
3. **Լսեցին՝** Տնօրեն Ի.Վարդանյանի ելույթը «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի 2019-2024թթ. ՌԶԾ-ի ընթացքի վերաբերյալ:

Տնօրեն Ի.Վարդանյանն ամփոփ և բովանդակալից ներկայացրեց 2019-2024թթ. ՌԶԾ-ի պլան ժամանակացույցով կատարված աշխատանքները, համաձայն հաստատված վերջնարդյունքների: Ամփոփելով ելույթը, Ի.Վարդանյանը ներկայացրեց ԳԱՑ-ին համապատասխան 2020-2021 ուստարվա աշխատանքների վերաբերյալ կատարողական զեկույցը (զեկույցը կցվում է):

### **ՈՐՈՇԵՑԻՆ՝**

1. Հաղորդումն ընդունել ի գիտություն:
2. Տնօրեն Ի.Վարդանյանի կատարողական զեկույցը գնահատել բավարար:

Նախագահ՝

Մ.Նանյան

Քարտուղար՝

Հ.Գրիգորյան